ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ

2025-2026 ուստարի

2025–2026 ուսումնական տարում Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնում կրթության որակի ապահովման գործընթացներն իրականացվել են հաստատված տարեկան աշխատանքային պլանին, Ռազմավարական ծրագրին և Բարելավման ծրագրին համապատասխան: Տարվա ընթացքում իրականացվել են կրթական գործընթացների պլանավորման, մոնիթորինգի, գնահատման և շարունակական բարելավմանն ուղղված աշխատանքներ:

2025 թվականի օգոստոսից իրականացվել են աշխատանքային հանդիպումներ մասնագիտական կրթական ծրագրերի պատասխանատուների, հոգեբանի, Ռեսուրսային կենտրոնի և Կարիերայի կենտրոնի պատասխանատուների հետ՝ Ռազմավարական ծրագրի և Բարելավման ծրագրի նպատակներին համապատասխան տարեկան աշխատանքային պլաններ մշակելու նպատակով: Ուսումնական տարվա ավարտին կատարված աշխատանքների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ նախատեսված միջոցառումների ճնշող մեծամասնությունն իրականացվել է: Շրջանավարտների համակարգված հետադարձ կապի մեխանիզմը դեռ զարգացման փուլում է, ոչ թե ընդհանուր համագործակցությունը թույլ է:

2025 թվականի սեպտեմբերին իրականացվել է ՄԱՋԾ-ի հետ համատեղ իրականացվող լրացուցիչ կրթական ծրագրերի շահառուների բավարարվածության ուսումնասիրությունը (**Հավելված 1**), որի արդյունքները ծառայել են ծրագրերի արդյունավետության գնահատման և հետագա բարելավման ուղղությունների նախանշման համար:

Նույն ժամանակահատվածում վերանայվել է «Գիտելիքների ստուգման, գնահատման և բողոքարկման կարգը»: Կատարված հիմնական փոփոխությունը վերաբերում է ձևավորող գնահատման մեխանիզմի ներդրմանը, որի նպատակն է բարձրացնել ուսանողների ուսումնառության շարունակական գնահատման արդյունավետությունը, ապահովել ժամանակին հետադարձ կապ և նպաստել ուսումնառության արդյունքների բարելավմանը:

2025 թվականի հոկտեմբերին Ուսանողական խորհրդի առաջին նիստի ընթացքում ձևավորվել է Որակի ապահովման ուսանողական հանձնաժողովը: Յուրաքանչյուր մասնագիտությունից ընտրվել է մեկ ներկայացուցիչ, բացառությամբ «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության, որի ուսանողներից ոչ ոք հանձնաժողովում ընդգրկվելու ցանկություն չի հայտնել:

2025 թվականի հոկտեմբերին վերանայվել է դասալսումների գրանցամատյանը՝ այն դարձնելով առավել կառուցվածքային, թիրախային և կիրառելի: Փոփոխությունների նպատակն էր հստակեցնել դասալսումների գնահատման չափանիշները, ապահովել միասնական մոտեցում և բարձրացնել դասալսումների արդյունքում ստացվող տեղեկատվության վերլուծական արժեքը: Արդյունավետությունը գնահատելու նպատակով նախատեսվում է իրականացնել հարցում դասավանդողների շրջանում 2026-2027 ուստարվա ուսումնամեթոդական խորհրդի առաջին նիստի ընթացքում:

2025 թվականի նոյեմբերին իրականացվել է հարցում 1-ին կուրսի ուսանողների շրջանում: Հարցման նպատակն էր բացահայտել նոր ընդունված ուսանողների նախնական տպավորությունները ուսումնական գործընթացի, միջավայրի և կազմակերպչական կողմերի

վերաբերյալ: Արդյունքները ընդհանուր առմամբ գոհացուցիչ են, ինչը վկայում է ուսումնական տարվա մեկնարկի հաջող կազմակերպման մասին: Հարցման վերլուծությունը կցված է հաշվետվությանը (**Հավելված 2**):

2025-2026 ուստարում կազմակերպվել են դասավանդողների կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներ ինչպես հիմնադրամի, այնպես էլ դասավանդողների նախաձեռնությամբ (**Հավելված 3**):

Դասավանդողների մասնագիտական զարգացման գործընթացը համակարգված դարձնելու, նրանց կողմից անցած վերապատրաստումների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն ունենալու և հետագա վերապատրաստումների կարիքները բացահայտելու նպատակով Որակի ապահովման պատասխանատուի նախաձեռնությամբ որոշվել է յուրաքանչյուր ուսումնական տարվա ավարտին իրականացնել դասավանդողների հարցում:

2025-2026 ուստարվա հարցման արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ դասավանդողների վերապատրաստման կարիքները հիմնականում կենտրոնացած են հետևյալ ուղղություններով՝ մասնագիտական նոր մեթոդաբանությունների և նորագույն մոտեցումների ուսումնասիրություն, միջազգային փորձի փոխանակում, օտար լեզուների ուսուցում, ձևավորող գնահատման արդյունավետ կիրառություն, նախագծային ուսուցման մեթոդներ, լսարանի արդյունավետ կառավարում, դեռահասների հետ աշխատանքի առանձնահատկություններ, ԿԱՊԿՈՒ ուսանողների հետ աշխատանքի ժամանակակից մեթոդներ, ներառական կրթության արդյունավետ ռազմավարություններ, ինչպես նաև ուշադրության կենտրոնացման և հիշողության դժվարություններ ունեցող ուսանողների հետ աշխատանքի առանձնահատկություններ, թվային կարողությունների զարգացում:

Ըստ ՈԱՊ աշխատանքային պլանի և ըստ բարելավման տարեկան ծրագրի նախատեսված էր իրականացնել դասավանդողների կարիքների վերհանում՝ մեթոդական և մասնագիտական գրականության համալրման անհրաժեշտությունը գնահատելու նպատակով: Սակայն 2025–2026 ուսումնական տարում տվյալ միջոցառումը չի իրականացվել՝ ֆինանսական սահմանափակումների պատճառով: Միաժամանակ, գրականության ֆոնդը մասնակիորեն համալրվել է ՄԿՈՒԶԱԿ-ի կողմից տրամադրված մասնագիտական գրականությամբ, ինչը հնարավորություն է տվել որոշ չափով բավարարել դասավանդողների և ուսանողների կարիքները:

Ուստարվա ընթացքում իրականացվել է «Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում» մասնագիտության կրթական ծրագրի մոնիթորինգ: Մոնիթորինգի արդյունքների, ինչպես նաև գործատուի հետ քննարկումների հիման վրա վերանայվել է կրթական ծրագիրը: Վերլուծության արդյունքում որոշում է կայացվել 2026–2027 ուսումնական տարվանից «Մազերի կտրում» ուսումնական մոդուլն իրականացնել ոչ միայն 3-րդ, այլև 2-րդ կուրսում՝ ապահովելով ուսանողների հմտությունների շարունակական զարգացումը, գործնական կարողությունների խորացումն ու աշխատաշուկայի պահանջներին առավել համապատասխան պատրաստվածությունը:

Իրականացվել է կրթության որակի գնահատում 2-րդ կուրսի ուսանողների կողմից: (**Հավելված 4**)

Ուստարվա ընթացքում դասալսումներ են իրականացվել թե՛ սկսնակ և թե՛ փորձառու դասավանդողների մոտ: Դասալսումների ավարտին իրականացվել են քննարկումներ՝ կրթության որակի բարելավման, դասավանդման արդյունավետության բարձրացման նպատակով: Դասալսումների վերլուծությունները ցույց են տալիս, որ որոշ դասավանդողների

մոտ դեռ կաղում են ինտերակտիվ մեթոդների կիրառումը, թվային տեխնիկայից օգտվելու հմտությունները: Դասալսումների արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ դասավանդողների մեծամասնությունը արդյունավետ կազմակերպում է ուսումնական գործընթացը և ապահովում ուսանողների ակտիվ մասնակցությունը: Միաժամանակ, առանձին դասավանդողների մոտ արձանագրվել է ինտերակտիվ ուսուցման մեթոդների և դասավանդման գործընթացում թվային տեխնոլոգիաների կիրառման հմտությունների զարգացման անհրաժեշտություն: Այս հանգամանքը հաշվի կառնվի 2026–2027 ուսումնական տարվա վերապատրաստումների պլանավորման ընթացքում:

2026 թվականի մարտին իրականացվել է դասավանդողների գնահատում 3-րդ կուրսի ուսանողների կողմից (**Հավելված 5**): Գնահատման նպատակն էր ուսումնասիրել ուսանողների բավարարվածության մակարդակը դասավանդման գործընթացի, դասավանդողների մասնագիտական և մանկավարժական գործունեության վերաբերյալ, ինչպես նաև բացահայտել բարելավման հնարավոր ուղղությունները:

Հետազոտական և նախագծային աշխատանքները իրականացվել են վերանայված ուղեցույցի պահանջներին համապատասխան: Աշխատանքների արդյունավետության գնահատման և հետագա բարելավման նպատակով իրականացվել է հարցում՝ պարզելու ուսանողների և դասավանդողների բավարարվածության մակարդակը հետազոտական աշխատանքների կազմակերպման և իրականացման գործընթացից: Համակողմանի վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ թե՛ դասավանդողները և թե՛ ուսանողները դրական են գնահատել հետազոտական աշխատանքների իրականացումը հիմնադրամում (**Հավելված 6, 7**):

Իրականացվել է դասավանդողների գնահատում վարչական կազմի կողմից՝ հիմք ընդունելով դասավանդողների ներկայացրած հաշվետվությունները, դասալսումների արդյունքները: Յուրաքանչյուր դասավանդող ստացել է իր գնահատման թերթիկը, կատարել իր դիտարկումները: Որոշ դասավանդողների համար սահմանվել են բարելավման աշխատանքներ հաջորդ ուստարվա ընթացքում իրագործելու համար:

Իրականացվել է արտադրական և նախասավարտական պրակտիկայի գնահատում ուսանողների կողմից: Արդյունքները ընդհանուր առմամբ գոհացուցիչ են (**Հավելված 8**):

2026 թվականի հունիսին իրականացվել է դասավանդողների տարեկան գնահատում՝ նախորդ ուսումնական տարում վերանայված և բարելավված գնահատման գործիքի կիրառմամբ: Գնահատման գործընթացը հնարավորություն է տվել համակողմանի ուսումնասիրել դասավանդողների գործունեությունը՝ հաշվի առնելով ներկայացված հաշվետվությունները, դասալսումների արդյունքները և այլ համապատասխան ցուցանիշներ:

Գնահատման արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ վերանայված գործիքը ընդհանուր առմամբ արդյունավետ է և ապահովում է դասավանդողների գործունեության բազմակողմ գնահատման հնարավորություն: Միաժամանակ, գնահատման գործընթացի հետագա կատարելագործման նպատակով նախատեսվում է մշակել կատարողականի առավել հստակ և չափելի ցուցիչներ՝ գնահատման գործընթացը դարձնելով առավել թափանցիկ, օբյեկտիվ և արդյունքահեն:

2025–2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացվել է հիմնադրամի ներքին գնահատում՝ հաստատության գործունեության արդյունավետության, կրթական գործընթացների կազմակերպման, կառավարման համակարգի և որակի ապահովման գործընթացների գնահատման նպատակով:

2025–2026 ուսումնական տարվա ընթացքում որակի ապահովման գործընթացները հիմնականում իրականացվել են նախատեսված ծրագրերին համապատասխան: Իրականացված մոնիթորինգների, հարցումների և գնահատումների արդյունքում բացահայտվել են կրթական գործընթացի ուժեղ կողմերը և բարելավման ենթակա ուղղությունները: Հավաքագրված տվյալները կօգտագործվեն հաջորդ ուսումնական տարվա աշխատանքների պլանավորման, դասավանդողների մասնագիտական զարգացման և կրթական ծրագրերի շարունակական բարելավման նպատակով:

Թվային փոխակերպման և ձեռնարկատիրական կարողությունների զարգացման նպատակով 2025–2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացվել են մի շարք միջոցառումներ Erasmus+ «ELE_VET» ծրագրի շրջանակում: Միջոցառումները ուղղված են եղել դասավանդողների թվային գրագիտության բարձրացմանը, ժամանակակից թվային գործիքների կիրառմանը, ինչպես նաև ուսանողների ձեռնարկատիրական մտածողության և համապատասխան հմտությունների զարգացմանը: Իրականացված աշխատանքները նպաստում են կրթական գործընթացի արդիականացմանը և աշխատաշուկայի փոփոխվող պահանջներին համապատասխան կարողությունների ձևավորմանը:

Կայուն զարգացման և բնապահպանական կրթության ուղղությամբ հիմնադրամում շարունակվել են աշխատանքները «Էկո ակումբի» շրջանակում: Մարսելի քաղաքապետարանի և ACFOA Septèmes-les-Vallons ասոցիացիայի հետ համագործակցության շնորհիվ իրականացվում է ծրագիր, որն ուղղված է հիմնադրամի շահակիցների բնապահպանական իրազեկվածության բարձրացմանը, պատասխանատու վարքագծի ձևավորմանը և կայուն զարգացման արժեքների տարածմանը:

Միաժամանակ, «Հայաստանի արահետներ» նախագծի շրջանակում իրականացվել են էկո-քայլարշավներ և բնապահպանական նախաձեռնություններ՝ նպաստելով ուսանողների ակտիվ մասնակցությանը, առողջ ապրելակերպի խթանմանը և համայնքային ներգրավվածությանը:

Ներառական կրթության ապահովման նպատակով ուսումնական տարվա ընթացքում իրականացվել են դասավանդողների վերապատրաստումներ՝ ԿԱՊԿՈՒՀ ուսանողների հետ աշխատանքի արդյունավետ մեթոդների և մոտեցումների վերաբերյալ: Վերապատրաստումների ընթացքում անդրադարձ է կատարվել ուսանողների անհատական կարիքների բացահայտմանը, համապատասխան մանկավարժական ռազմավարությունների կիրառմանը և աջակցող ուսումնառության միջավայրի ձևավորմանը:

Որակի ապահովման գործընթացների շարունակական զարգացման և մասնագիտական կարողությունների ամրապնդման նպատակով ՈԱՊ-ը մասնակցել է ETF-ի կողմից կազմակերպված վերապատրաստմանը՝ միտված ՀՀ ՄԿՈՒ հաստատություններում ձևավորող գնահատման ներդրմանը:

Erasmus+ Improvet_AM նախագծի շրջանակում ՈԱՊ- ը մասնակցել է ծրագրի գործընկերներ ֆրանսիական SEPR կամպուսի և իտալական Apro Formazione կենտրոնի կողմից կազմակերպված հետևյալ վեբինարներին՝

- Learning the VET Center in terms of Green Transition
- Innovative teaching and Digitalization
- Entrepreneurship
- WBL
- Internationalisation: Partnerships, Project Design, Management and Mobility

– Common Values, Civic Engagement, Gender Equality, Participation and Social Inclusion

ԱՄՓՈՓՈՒՄ

2025-2026 ուստարվա ընթացքում իրականացվել է՝

- 8 հարցում
- 1 ներքին գնահատում
- 1 կրթական ծրագրի մոնիթորինգ
- դասալսումներ բոլոր մասնագիտություններում
- դասավանդողների տարեկան գնահատում
- կրթության որակի գնահատում
- արտադրական պրակտիկայի գնահատում
- հետազոտական աշխատանքների գնահատում
- վերապատրաստումների կարիքների ուսումնասիրություն

2025–2026 ուսումնական տարվա ընթացքում իրականացված գնահատումների, մոնիթորինգների և հարցումների համադրումը ցույց է տալիս, որ հիմնադրամում շարունակվում է կրթության որակի ապահովման համակարգի կայուն զարգացումը: Նախորդ տարվա համեմատ արձանագրվել է ուսանողների հարցումներին մասնակցության աճ, բարձրացել է առաջին կուրսեցիների բավարարվածությունը ուսումնական միջավայրից, բարելավվել են մի շարք դասավանդողների գնահատման արդյունքները, իսկ կրթական ծրագրերի մոնիթորինգի արդյունքները կիրառվել են ծրագրային փոփոխությունների ընդունման ժամանակ: Միաժամանակ բացահայտվել են շարունակական ուշադրություն պահանջող ուղղություններ՝ թվային տեխնոլոգիաների կիրառման ընդլայնում, ուսանողների իրազեկվածության բարձրացում, կատարողականի գնահատման ցուցիչների հստակեցում և շրջանավարտների հետ հետադարձ կապի համակարգի զարգացում:

Կազմող՝ Ա. Դաբաղյան